# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

## ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Ստեփանակերտ «15» Հոկտեմբերի 2009թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն՝ ի դեմս կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի, որը գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը՝ ի դեմս նախարար Վ.Խաչատրյանի, որը գործում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետև՝ կողմեր), ելնելով ՀՀ կառավարության և ԼՂՀ կառավարության համագործակցության ծրագրից, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԼՂՀ կրթության և գիտության նախարարության միջև կրթության բնագավառում 2007-2010թթ. համագործակցության գործնական ծրագրից, կնքեցին սույն պայմանագիրը՝ համատեղ գիտահետազոտական, նախագծատեխնոլոգիական աշխատանքների իրականացման մասին (այսուհետև՝ աշխատանքներ):

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) Կողմերը կնքելով սույն պայմանագիրը՝ նպատակ ունեն.

ա. Աջակցել բնագիտական, տեխնիկական և հումանիտար գիտությունների բնագավառներում իրագործվող հիմնարար, կիրառական բնույթի համատեղ աշխատանքներին,

բ. Համատեղ ֆինանսավորել անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա մրցութային հիմունքներով ընտրված հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների նախագծերը,

գ. Աջակցել երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող հիմնարար, կիրառական գիտահետազոտական աշխատանքներին, կադրերի վերապատրաստմանը,

դ. Միմյանց աջակցել գիտական նյութերի և գրականության փոխանակման հարցում,

ե. Միմյանց օժանդակել գիտական փորձաքննության իրականացման, այս գործընթացում առաջատար գիտնականների ներգրավման հարցում,

զ. Աջակցել համատեղ գիտաժողովների, դասընթացների, սեմինարների և այլ գիտական միջոցառումների անցկացմանը:

2) Ղեկավարվելով գործող օրենսդրությամբ՝ կողմերը լուծում են համատեղ նախագծերի իրականացման ընթացքում ստեղծված մտավոր սեփականության հնարավոր պաշտպանության հարցերը:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Կողմերը պարտավոր են՝

ա. Ժամանակին մշակել և ՀՀ և ԼՂՀ կառավարությունների հաստատմանը ներկայացնել համատեղ աշխատանքների նախագծերը,

բ. Ապահովել իրենց բաժին աշխատանքների ֆինանսավորումը,

գ. Ապահովել աշխատանքների որակյալ և ժամկետային կատարումը,

դ. Կողմերի գիտական խորհուրդներում քննարկել թեմաները և կատարվող աշխատանքների արդյունքների մասին փոխանակել տեղեկատվություն,

ե. Աշխատանքների կատարման ընթացքում և դրանց ավարտից հետո ներկայացնել տեղեկատվական հաշվետվություններ,

զ. Աջակցել ավարտված աշխատանքների ներդրմանը,

է. Հրապարակել համատեղ ավարտած աշխատանքների արդյունքները:

2) Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի՝

ա. Ծանոթանալ կատարվող աշխատանքներին և անհրաժեշտության դեպքում հաստատված կարգով մշակել ծրագրի վերանայման առաջարկություններ,

բ. Մյուս կողմի համաձայնության դեպքում հրապարակել աշխատանքների արդյունքները,

գ. Անհրաժեշտության դեպքում ճշտել մասնակիցների, կատարողների կազմն ու քանակը, ինչպես նաև իրենց բաժին աշխատանքների ֆինանսավորման ծավալը:

## 3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) Սույն պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

2) Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

3) Սույն պայմանագիրը կնքվում է երեք տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ երեք տարվա համար, եթե կողմերից որևէ մեկը սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ մյուս կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

4) Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե<br>ք. Երևան, Օրբելի եղբ. փ. 22 | ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն<br>ք. Ստեփանակերտ, |
| Նախագահ՝ Ս. Հարությունյան | Նախարար՝ Վ. Խաչատրյան |
| ---------- (ստորագրություն) | ---------- (ստորագրություն) |
| Կ.S | Կ.S |